

Армянский Колледж

Учитесь АРМЯНСКОМ ГОВОРИТЬ НА ЯЗЫКЕ

+7 904 506 91 28

Հայկական անեկոտներ



Մի գլուղացի ավտոբուսի պատուհանից գլուղը հանում է, գլխարկը ընկնում է: Հանում է մի ուրիշի ու դուրս նետում.
- Յեղի ավտոբուսովը կիկյաս:



Ավագ պապը մտքերով տարված՝ ձին հակառակն էր թամբում: Անցորդներից մեկն ասում է.

- Ավագ պապ, ետ խի՞ ես ձին թամբում:

- Ա շան տղա, ինչ գիդես, ես վերև եմ գնում, թե ներքև:



- Վարդուշ, էդ ի՞նչ սիրուն սվիտր ես հագել:

- Գերմանականա, քուրսա գործած, ուշադրությունից ուրախացավ Վարդուշը:



Արշակը հանդիպում է Գրիգորին, հարցնում է՝ ո՞նց ես:

- Ասեք թա՛ փիս եմ, հինչա՞վ կարաս քյոմագ անես...



- Էն մեր խոխի տելեֆոնի համարը հիշո՞ւմ չե՞ս:

- Չէ:
- Ա մոտավորապես էլ չես հիշո՞ւմ...



Բաբաջանը տարիքն առած, հիվանդ պառկած էր: Ասում էին՝ արդեն մարդ չի ճանաչում: Իսպախանը գնում է տեսության ու հարցնում.

- Բաբաջան, ինձ ճանաչո՞ւմ ես:
- Չէ, Իսպախան, չէ...



- Խոխա, անունդ հինչա՞:
- Աշոտիկ:
- Հո՞ւմ պատվին ան դրալ:
- Գրիշա պապիս...



- Ինչո՞վ է պատժվում երկվնությունը:
- Երկգործանչությամբ:



- Կարո՞ղ է արդյոք կինն ամուսնուն դարձնել միլիոնատեր:

- Իհարկե, եթե նա միլիարդատեր է:



- Ինչ տարբերություն կնոջ կարձանիկի միջև:

- Արձանիկն ընկնում է և կոտրատվում, կինը նախ կոտրատվում է, հետո՝ ընկնում:



- Ի՞նչ անել, եթե օտարալեզու երգեր ես տեսնում:

- Քնել թարգմանչուհու հետ:




- Ինչպե՞ս են ստեղծվում անեկոտները: Ինչ-որ մեկը նստում է ու գրո՞ւմ:

- Ոչ, ինչ-որ մեկը նախ գրում է, հետո՝ նստում:



- Ովքե՞ր են հեռավոր ազգականները:
- Դրանք ամենալավ բարեկամներն են, ինչքան հեռու, այնքան լավ:

АРМЯНСКИЙ ЯЗЫК ДЛЯ САМЫХ МАЛЕНЬКИХ



S տ
ՏԱՆԻՔԻ ԿԱՏՈՒՆ
Տան տանիքից մինչ կաթնատուն էրեք ցատկ է անում կատուն:
Կաթնատանը կաթիկ ուտում՝ Նույն ճամփով էլ դառնում տուն:
Ո՞վ է կատվին կաթով պատվում, Կարծում ես կմատի՞ր կատուն:



Ր ր
ՐՈՊԵՆ ՄԵԿ
Րոպեն մեկ, Րոպեն մեկ, Կյանքից ամեն թոպեն մեկ, Վաթսուն վարյական, Վաթսուն հեք
Հնչում են ու մնում ետ՝ Րոպեն մեկ, Րոպեն մեկ:




Ց ց
ՑՈՂԸ
Ցողը դողաց, Ցոլցաց, Ցողունն ի վայր սահեց ցած, Թեթևացած շտկվեցին Ցողունները կորացած:



Рубрику ведет преподаватель армянского языка Арmine Варданян


Նյութը վերցված է Յուրի Սահակյանի «Այբբենարանի ուղեկից» գրքից
Տպագրության պատրաստեց Արմինե Վարդանյանը

КРОССВОРДЫ ОТ ШОГИК СИМВОНЯН




Кроссворд № 31

По вертикали:
1. Груша. 2. Саженец. 3. Тетрадь
По горизонтали:
2. Бабушка. 4. Рыба



Кроссворд № 32

По вертикали:
1. Моментально. 2. Три.
По горизонтали:
1. Минута.



Кроссворд № 33

По вертикали:
1. Сеть, сетка. 2. Забор, изгородь.
По горизонтали:
3. Оглавление. 4. Холод.



Рубрику ведет преподаватель армянского языка Шогик Симвонян

Օրերի հետ

Լարսի էժան ճանապարհով հայաստանցիները «հոսում են» Ռուսաստան

Ժամանակին, և թերևս մինչ օրս էլ, արտագաղթի մասին խոսակցություններում կես հեգնական կես կատակ ասվում էր, թե Հայաստանում մնացել են նրանք, ովքեր կամ փող չունեն ինքնաթիռի տոմս գնելու, կամ էլ, ինչպես հայտնի մուլտֆիլմի հերոսն էր ասում՝ «իրենց այստեղ էլ վատ չեն կերակրում»: Սակայն արտագաղթ ասվածն իրականում ահռելի չափերով ահագնանում է, ինչի մասին վկայություններն ու փաստերն այնքան էլ ցնծուն չեն, սակայն գործընթացը կամաց-կամաց լափում է իրականությունը:

Պաշտոնական վիճակագրությունն էլ անգամ որոշ առումով ապացուցում է, որ ավելի շատ մարդիկ հեռացել են, քան վերադառնում՝ թեկուզ այդ վիճակագրությունը մատուցվում է որպես «զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնաձևեր»:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ 2013-ի հունվար-մարտ ամիսներին հանրապետությունից մեկնել է մոտ 138 հզ. մարդ, և այդ ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատված համեմատ աճել է մոտ 15 տոկոսով:

Ու որքան էլ պետական մոտեցմամբ ու պաշտոնապես փորձեր արվեն բացատրելու, թե սրանք բոլորը զբոսաշրջիկներ են ու որ, ասե՛ք, այս օրերին վերադառնում են Հայաստան, ոչ միայն տրամաբանական չէ, այլև անհավատալի է: Անհավատալի է, քանի որ հանգստի մեկնողները ամիսներով չեն լինում դրսում, իսկ «աշխատանքային զբոսաշրջության սիրահարները» այդ ժամանակահատվածում ոչ գնում են,

ոչ էլ վերադառնում: Ստացվում է, որ հանրապետությունից, բոլոր պարագաներում, ավելի շատ մարդ հեռացել է:

Իսկ այն հիմնական «պահող» գործոնը, որ ոմանց համար կապվում է ինքնաթիռի տոմս չունենալու հետ, թերևս էլ գործունակ չէ: Ընդ որում, գործունակ չէ ոչ այն պատճառով, որ օդային փոխադրումները Հայաստանում էժանացել են, այլ որովհետև ցամաքով Հայաստանը լքելու շատ ավելի էժան ուղին արդեն քանի ամիս տևում և այդպես էլ չի վերադարձնում մարզերի բնակչության մի զգալի մասին:

Ռուս և վրացական սահմանի վերին Լարսի անցակետով մեկ անգամ անցած յուրաքանչյուր մարդ նախ զգովանքի զգացողություն է ունենում, հետո էլ չարության: Զգվելի է, քանի որ ժամեր շարունակ հարկ էլ լինում սպասել անհայտ ուղղությամբ ու անորոշ ժամանակով կորչող, որքան էլ տարօրինակ լինի, ռուս սահմանապահներին, իսկ նաև բարկացնում, քանի որ հին խորհրդային ավանդույթների համաձայն՝ ամեն ռուս սահմանապահ ու այդ կողմերում թեկուզ պարապ թրև եկող իր «բաժինն» է պահանջում:

Բայց սա հարցի եական ու ցավալի կողմը չէ, ավելին, այդ սահմանը հատող Հայաստանի քաղաքացիներից շատ քչերին է հուզում: Ռուս և վրացական սահմանի ռուսաստանյան կողմի առաջին իսկ բնակավայր Հայաստանից կարելի է հասնել երթուղային տաքսի կոչվածով ոչ ավելի, քան մի 25000 դրամով, ինչն էլ հենց սկիզբ է դնում ցավալի զգացողությանը, մարզերի

բնակչությունը, որ մի քանի հարյուր դոլար չունեն ինքնաթիռի տոմս գնելու համար, որ մեծ դժվարությամբ, շատ հաճախ իրար վրա դնելով ծեր ծնողների խղճուկ թոշակը, գտնում է մի քանի տասնյակ հազար դրամն ու՝ հայդա Ռուսաստան...
Վերջին շրջանում մարզերում լինելը նաև հնարավորություն էր սեփական աչքերով տեսնելու, թե ինչպես էին իմ հայրենակիցները խմբերով խցկվում 25000-անոց «մարշրուտկաներն» ու հեռանում հայրենի մեծ ու փոքր գյուղերից և ավաններից, հեռանում Ռուսաստան՝ սկզբնական շրջանի համար աշխատանք գտնելու նպատակով: Ոչ հարցի են ուզում պատասխանել, ոչ էլ լուսանկարվել: «Որ էստեղ մի հալի լինեի, կգնայի»...: Այսպիսի պատասխանն ընդհանուր բնութագրական է, ու դրանից հետո մարդուն լրացուցիչ հարց տալու ցանկություն չի մնում. հո ընտանիք ու տուն թողնելը հեշտ չէ, ինչքան էլ սովոր ենք հայրեն մեր մասին ասելու, թե դրսի հետ հավեն ունենք:
Ու թեև հանրապետությունն, ընդդիմության ու ընդդիմադիր կեցվածքը սովորություն դարձրած մի քանի անհաջող քաղաքական գործիչների հայտարարությունները, թե Հայաստանը դատարկվել է, իրականությանը չեն համապատասխանում, սակայն գյուղեր ու մարզային կենտրոններ այցելությունները ուզած ոչ ընդդիմադիրներին կապացուցեն, որ դատարկվել ասվածը թեև իրողություն չէ, բայց շուտով կլինի, եթե այս իրավիճակը պահպանվի: